

ԲՐԻՏԱՆԻԱ ՀՐԱԺԵՇՏ ՏՈՒԱԻ ՄԱՅՐ ԹԱԳՈՒՀԻՆ

Աւելի քան մէկ միլիոն սպաւորներ երէկ հրաժեշտ տուին Բրիտանիոյ մայր թագուհին՝ փառաշուք յուզարկաւորութեան մը ընթացքին, իսկ աշխարհի տարածքին շուրջ 300 միլիոն հոգի պատկերասփիւռի պատճառներու ճամբով հետեւեցան անոր:

Թագաւորներ, թագուհիներ, այլ ազնուականներ եւ հոծ ժողովուրդ ներկայ գտնուեցան Ուէսթմինսթըրի մէջ կայացած հանդիսութեան: Անոր գանգակները 101 անգամ հնչեցին՝ մայր թագուհին փոթորկալից եւ երկարատեւ կեանքին իւրաքանչիւր տարիին համար:

Մինչ էլիզաբեթ թագուհին մօրը մահը ոչ մէկուն համար անակնկալ էր, անոր մահէն ետք սիրոյ արտայայտութիւնները բոլորը զարմացուցած են:

Նորագոյն հարցախոյզներէն մէկը ցոյց տուած է, թէ անոր մահը ամբողջովն է թագաւորութեան հանդէպ զօրակցութիւնը, մինչ անկա տարիներէ ի վեր գայթակղութեանց եւ ամուսնալուծումներու հարցեր կը դիմադրուէ:

Փոռաշուք յուզարկաւորութիւնը «տօնախմբութիւն» մըն էր մայր թագուհին «ուրիշ, արժանապատուութեան եւ խնդուքին»՝ 101 տարուան փոփոխութիւններու ընթացքին:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԱՅՂԱՆԻՍԱՆ ԲԱՐՁԱՅ ԱՅՏԵԼԵՑ ՊԱՄԻԱՆ ՆԱՀԱՆԳ

Աֆղանիստանի փոխանցման հանգրուանի ղեկավար Համիտ Քարզայ երէկ այցելած է Պամիան նահանգը, ուր վերջերս գտնուած են հաւաքական երեք գերեզմաններ: Ըստ տեղացիներու՝ անոնք լեցուած են մարդոցմով, որոնք սպաննուած են, երբ շրջանը թալիբաններու հակակշիռին տակ կը գտնուէր:

Քարզայ մեծ ամբոխի մը առջեւ խօսք առած է, սակայն ան գերեզմաններուն վայրը չէ այցելած եւ անմիջապէս յստակ չէ եղած, թէ ինչու: Նախապէս, Քարզայի մէկ բանբերը Քապուլի մէջ յայտնած է, թէ աֆղան ղեկավարը Պամիան մեկնած է, որովհետեւ ուզած է գերեզմանները տեսնել:

Պամիանը չիի Հազարա խմբակին միջնաբերդն է: Քարզայ դիտել տուած է, որ ամբողջ Աֆղանիստանը չարչարանքներու ենթարկուած է, մարդիկ սպաննուած են, տուներ այրած են, «սակայն հազարներն ու Պամիանը ամէնէն աւելի տանջուած են», ըսած է ան:

Քարզայ ըսած է, որ փոխանցման կառավարութիւնը կը նպատակադրէ ղեկի կեդրոնական Աֆղանիստան տանող բոլոր ճամբաները հարթել, որպէսզի շրջանին բնակիչները դիւրաւ առեւտուր կատարեն:

Ըստ Ասիական Բարգաւաճումի Դրամատան երէկ հրատարակուած մէկ տեղեկագիրին՝ Աֆղանիստանի 21 հազար քիլոմետր երկարութեամբ ճամբաներուն միայն 13 առ հարիւրը կուպրապատ են:

ԱՐԵՄՏԵԱՆ ԱՅՂԱՆԻՍԱՆԻ ՄԷՋ ԲԱՆՈՒՄՆԵՐ

Միւս կողմէ, արեւմտեան Աֆղանիստանի մէջ տեղի ունեցող բախումները կը սպառնան ձախողութեան մատնել իրանէն գաղթականներ վերադարձնելու փորձերը:

Մրցակից պատերազմի «իշխան»ներու միջեւ բախումները ծայր տուած են, մինչ իրան եւ ՄԱԿի գաղթականներու գործակալութիւնը երէկ ընթացքի մէջ դնելու կը սկսէին իրան ապաստանած շուրջ 2 միլիոն աֆղան գաղթականներու տունդարձի ծրագիրը:

● ԲՐԻՏԱՆԱՅԻ խաղաղարար գինուոր մը երէկ ծանրորէն վիրաւորուած է Քապուլի մէջ, երբ անոր վրայ կրակ բացուած է:

Դէպքին շուրջ քննութիւն բացուած է: (ՌՈՅԹԸՐԶ)

ԳԵՐՄԱՆԻԱ ԿԸ ՅԵՏԱԶԳԷ ԻՍՐԱՅԷԼԻ ԽՈՍՏԱՅՈՒԱԾ ՀՐԱՄԱՅԼԵՐՈՒ ՓՈԽՆՈՐԴ ԿՏՈՐՆԵՐՈՒ ՅԱՆՉՆՈՒՄԸ

ԵՐՈՒՍԱԶԷՄ, 9 (ՌՈՅԹԸՐԶ).- Իսրայէլի պաշտպանութեան նախարարութիւնը երեքշաբթի օր յայտնած է, թէ Գերմանիա յետաձգած է իր «Մերքալ» տիպի հրասայլերուն փոխնորդ կտորներու յանձնումը եւ թէ նախարարութիւնը բանակցութիւններ կը վարէ անոնց հայթայթու-

մին սկսելու համար: Անմիջապէս չէ յստակացած, թէ ուշացումներուն պատճառը ի՞նչ է:

Իսրայէլեան թերթերու համաձայն՝ Գերմանիա դժգոհ է Այսրրորդ կտորներու յանձնումը թէ նախարարութիւնը բանակցութիւններ կը վարէ անոնց հայթայթու-

ԳԵՐՄԱՆԻԱՅ ՄԷՋ

ՇՐԵՕՏԸՐ - ԾԵՄԻՆ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Չինաստանի նախագահ Ճիանկ Օւեյն երէկ Գերմանիոյ մէջ տեսակցութիւն մը ունեցած է վարչապետ Կերիարտ Շրէտտերի հետ, մինչ կրօնական համայնքներու եւ փոքրամասնութիւն կապմող համայնքներու հանդէպ Չինաստանի վերաբերմունքը քննադատող խմբակներ ցոյցերու դիմած են:

Ճիանկ, որ Գերմանիա պիտի մնայ մինչեւ Ապրիլ 13, կ'ուզէ շեշտը դնել յատկապէս երկկողմանի լաւ յարաբերութիւններուն վրայ, իսկ անոր այցելութեան գծով միայն պատկերասփիւռն ու նկարիչներ կը վրադին: Շրէտտեր խուսափու չէ յայտնելէ, թէ տեսակցութիւններուն ընթացքին, Ճիանկ Ֆալուն Կոնկ շարժումին գծով իր կարծի կեցւածը պահպանած է: Չինաստան 1999ին շարժումը ապօրինի հռչակած էր:

Նախքան Գերմանիա այցելութիւնը, գերմանական լրատուադրիւրներու հետ հարցապրոցներու ընթացքին, Ճիանկ Ֆալուն Կոնկ շարժումին գծով իր կարծի կեցւածը պահպանած է: Չինաստան 1999ին շարժումը ապօրինի հռչակած էր:

«Ըմբռնքի Ինթըրնէ-շընըլ» խմբակը անցեալ ամիս Չինաստանը ամբաստանած է իսլամ անջատողական ուղիներու վրայ մշտնջենական թափ տալու յանձնարարութիւնը, պատրուակելով՝ սիւննիթական դէմ պատերազմը:

Ճիանկ երէկ առաւօտուն տեսակցութիւն մը ունեցած է նախագահ Եոհանէս Ռաուի հետ. անոնք քննարկած են երկու երկիրներուն միջեւ մշակութային յարաբերութիւնները:

ՉԻՆԱՍՏԱՆ ՈՒՃԵՆԿԱԹԸՆԿ ԿԸ ԸՆՆԱԴԱՏԷ

Միւս կողմէ, Չինաստան երէկ յայտնած է, թէ Մ. Նախագ-

րու գործածութեան:

Իսրայէլի պաշտպանութեան նախարարութեան բանբերը մերժած է այդ գծով որեւէ բան ըսել, յայտնելով, որ կապեր հաստատուած են Գերմանիոյ արտաքին գործոց եւ պաշտպանութեան նախարարութիւններուն եւ վարչապետին գրասենեակին հետ:



ներ Չինաստանի ներքին հարցերուն միջամուխ կ'ըլլան, երբ Փենթագոնի բարձրաստիճան մէկ պաշտօնատարը կ'ըսէ, թէ Ռաշին: Շրէտտեր խուսափու չէ յայտնելէ, թէ տեսակցութիւններուն ընթացքին, Ճիանկ Ֆալուն Կոնկ շարժումին գծով իր կարծի կեցւածը պահպանած է: Չինաստան 1999ին շարժումը ապօրինի հռչակած էր:

Մ. Նախագահներու փոխ նախարար Փոլ Վոլֆովից անցեալ ամիս Մ. Նախագահներու մէջ լուսարձակներէ հեռու խօսած է թալիբանի պաշտպանութեան փոխ նախարարին, թալիբանի օմանիակելու հարցին մասին, սակայն անոր արտայայտութիւնները հրապարակուած են միայն Երկուշաբթի օր: Ան

խորքին մէջ կը վերահաստատէր Մ. Նախագահներու նախագահ Ճորձ Պուշի տուած մէկ խոստումը՝ անոր նախագահութեան առաջին օրերուն:

Պէյճիւնի Թայուանը կը նկատէ ըմբռնական մը, որ պէտք է վերամիանայ Չինաստանին: Անկա կը մերժէ նաեւ հրաժարի ուժի գործածութեան՝ այդ նպատակին հասնելու համար:

Թայուանի պաշտպանութեան նախարար թանկ Եիաու-մինկի Մ. Նախագահը այցելութիւնը խստիքնադատուած էր Պէյճիւնի կողմէ:

(ՌՈՅԹԸՐԶ)

ՂԱԶՆԻՍԱՆ

ԵԼԵԻՄՏԱԿԱՆ ԳԱՅԹԱԿՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՄՄՄԹԻ, 9 (ՌՈՅԹԸՐԶ).- Ղապախստանի արտաքին գործոց նախարար Քախիմժովարթ Թոքաեւ Երեքշաբթի օր պաշտպանած է 1996ին կայացած նախագահական որոշումը՝ 1 միլիարդ տոլար օտար դրամատնային գաղտնի հաշիւի մը մէջ դնելու գծով, յայտնելով, որ սակայն եւ վերջերս արձանագրուած շարք մը գայթակղութիւններ պէտք չէ երկրին դիմագիծին վնասել:

Անցեալ շաբթուան բացայայտումը, թէ նախագահ Նուրսուլթան Նապարպաեւ առանց խորհրդարանը տեղեկակ պահելու 1 միլիարդ տոլար փոխադրած է արտասահման, քարիչի ընկերութեան մը մէջ պետութեան պատկանող բաժնետոմսերու վաճառքէն ետք յայտնաբերուած է:

Անցնող քանի մը շաբթուան, ընդդիմադրութեան պատկանող քանի մը թերթերու հրապարակումը արգիլուած է, իսկ պատկերասփիւռի կայան մը պարտադրաբար դադարած է սինթէզէ՝ անոր ելեկտրական գլխարկը թելը արձակագինի մը փամփուշտին թիրախ դառնալէ ետք:

Անցեալ ամսուան վերջերուն, ընդդիմադիր ակնաւոր անձնաւորութիւն մը ձեռքարկուած է, իսկ ուրիշ մը ապաստանած է Ֆրանսական դեսպանատան մէջ՝ նոյն ձախտագիրէն խուսափելու համար: Անոնք ամբաստանուած էին իրենց պաշտօնը չարաշահելու յանցանքով: Ամբաստանութիւնը հերքուած է:

Արտաքին գործոց նախարարը Երեքշաբթի օր նշեալ դէպքերը անկարելի որակած է, դիտել տալով, որ գաղտնի գումարին բացայայտումը ցուցաբերելու փրկած է 1998ին տեղի ունեցած ելեւմտական տագնապի մը ընթացքին:

Ան ըսած է, որ վարչապետ Իմանկալի Թամակապետով, որ գաղտնի գումարին մասին անցեալ Հինգշաբթի օր տեղեկացուցած է խորհրդարանը, յատուկ արտօնութիւն ստացած է ատիկա ընելու համար:

Ան աւելցուցած է, թէ այդ քայլը Ղապախստանը սնանկացումէ փրկած է 1998ին տեղի ունեցած ելեւմտական տագնապի մը ընթացքին:

ՄԵՆԻՏԱԿԱՆ ԱՐԱՔԻԱ ՊԻՏԻ ԳՈՑԷ ԻՐԱՔԻ ՍՏԵՂԾԱԾ ԲԱՐԻԴԻ ԲԱՅԸ

Մէնտական Արաքիա կը փորձէ փարատել քարիչի շուկային մտահոգութիւնները, յայտարարելով որ պիտի գոցէ իրաքեան որոշումին պատճառով ստեղծուելիք բացը:

Քարիչի նախարար Ալի Նամաթի վստահեցուց, որ մտահոգութեան պատճառ չկայ եւ թէ Մէնտական Արաքիոյ պահանջուած քանակը պիտի հայթայթէ միջազգային շուկային:

Իրաքի նախագահ Սատամ Հիւսէյն Երկուշաբթի օր զարեցուց քարիչի արտածումը, իբրեւ բողոք Իսրայէլի դաշնակիցներուն որդեգրած կեցուածքին համար: Սատամ որոշած է մէկ ամիսով առկախել արտածումը: Իրաք կող ուղղեց նաեւ այլ երկիրներու զարեցնելու քարիչի արտածումը:

Սատամի որոշումին լոյսին տակ քարիչի տակառնի սակը մէկ տոլարի յաւելում արձանագրեց: Իրաքի քարիչի նախարար Ամիր Մոհամէտ Ռաշիտ երէկ յայտնեց, որ Պաղատ ՕՓէՔի անդամներուն կող ուղղած է յաւելեալ քանակութեամբ քարիչ չարտածելու եւ միանալու Իրաքի որոշումին:

Քարիչի շուկային հակող շարժում մը ըսաւ, որ մտահոգիչ պատճառ չկայ եւ թէ անցնող քարիչի պարագային՝ ճարտարտեսականացած 25 երկիրներ կրնան իրենց պահանջները բանալ:

Եւրոպական Միութիւնը իր կարգին յայտնեց, որ քարիչի մասնագէտներ հանդիպում մը ունենան՝ արժեւորելու համար իրաքեան որոշումին գործելիք ազդեցութիւնը:

Քարիչ արտածող իրան յայտարարեց, որ պատրաստ է ստեղծել քարիչի արտածումը Իսրայէլի գորակի կանգնող երկիրներու, եթէ այլ երկիրներ ալ գործակցին: Խորհրդարանի նախագահ Մեհաբ Քաուաբի, որ նախագահ Մոհամէտ Նամաթիի դաշնակիցներէն է, ակնարկութիւն չկատարեց սահմանափակ իրաքի տուած որոշումին մասին: Քաուաբի չըսաւ սակայն, թէ որո՞նք են այն երկիրները, որոնց գործակցութեան մասին խօսած է: Անցնող քարիչի մը օրերուն, իրանցի բարձրաստիճան այլ պաշտօնատարներ նոյնանման տեսակէտներ արտայայտած էին:

Միւս կողմէ, Եգիպտոս կը մերժէ քարիչը իբրեւ գէնք գործածելու առաջարկ, դիտել տալով որ անկա պիտի չզարեցնէ պաղեստինեան շրջաններուն դէմ իսրայէլեան յարձակումները: Քարիչի նախարար Մամէն Ֆահմի ըսաւ նաեւ, որ Ամերիկային եւ Եւրոպային դէմ ճնշում բանեցնելու նպատակով քարիչի ամպարի մը հաստատում որեւէ շահ պիտի չպահանջէ, որովհետեւ յիշեալ երկիրները ունին քարիչի պահեստ մը, գոր կրնան օգտագործել, երբ կարիքը գզացուի: Ֆահմի աւելցուց, որ քարիչի նոր սակերը բաւական բարձր են եւ կարեւոր եկամտաւոր կը տրամադրեն Եգիպտոսի տագնապահաճ տնտեսութեան:

Իրտանիա իր կարգին դատապարտեց Սատամ Հիւսէյնը, դիտել տալով, որ ան կը շահագործէ պաղեստինցի ու իրաքի ժողովուրդներուն տառապանքը՝ առկախելով քարիչի արտածումը: «Սատամ ժողովուրդին տառապանքը քաղաքական քաղաքարտի վերածած է», ըսաւ արտաքին գործոց նախարարութեան բարձրաստիճան պաշտօնատարներէն՝ Պէյ Պէյտը:

(ՌՈՅԹԸՐԶ)

ՔՈՍՈՎՈ

ԲԱՆՈՒՄՆԵՐ՝ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՍԵՐՊ ՅՈՒՅԱՐԱՐՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ

Քոսովոյի մէջ երկուշաբթի օր ՄԱԿի առնուազն 16 ոստիկաններ վիրաւորուած են՝ Միթրովիցա քաղաքին մէջ սերպ հարիւրաւոր ցուցարարներու հետ տեղի ունեցած բախումներու ընթացքին:

ՄԱԿի ոստիկաններ յայտնած են, թէ իբրեւ ինքնապաշտպանութիւն կրակած են երկու զինեալներու վրայ, սակայն յստակ չէ եղած, թէ անոնք զարնուած են:

Իրտուցիւնները, որոնք ամիսներէ ի վեր ամէնէն ծանրակշիռներն էին հարաւային Եուկոսլաւ նահանգին մէջ, ծայր տուած են, երբ սերպեր սկսած են քարեր արձակել ՄԱԿի ոստիկաններուն վրայ, որոնք երթեւեկի համար անցարգել մը հաստատած են կամուրջի մը վրայ:

Ամբողջ աւելի եւս մեծցած է, երբ ոստիկաններ ցուցարարներէն քոսովոցի սերպ մը ձեռքարկուած են: Սերպական պետական պատկերասփիւռ յայտնած է, թէ ՄԱԿի ոստիկանները արցունքաբեր կազ եւ անշարժութեան մատնող ձեռնառումներ արձակած են եւ 10 սերպեր վիրաւորուած են:

Տեղացի սերպ քաղաքական անձնաւորութիւն մը՝ Մարքո Եաքսիչ ամբաստանած է ՄԱԿի ոստիկանութիւնը դէպքը հրահրած ըլլալու յանցանքով:

Աւելի ուշ Միթրովիցա կը թուէր անգարտած ըլլալ:

ՄԱԿ Քոսովոյի հակակշիռի տակ առած էր 1999ի ամբողջ, եուկոսլաւ ուժերու նահանգէն քաղաքից ետք՝ ՕՔԱՆԵԱՆ ուժակոծումներու արշաւին աւարտէն ետք:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARD
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ
ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ԱՐԺԷՔԱՒՈՐ ՆՈՒԵՐՆԵՐ՝ «ԿԻԼԻԿԻԱ» ԹԱՆԳԱՐԱՆԻՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Կիլիկիա» թանգարանին տնօրէնութիւնը ստացած է արժէքաւոր եւ պատմական հնութիւն ունեցող նուէրներ, որոնք աւելիով կը ճոխացնեն թանգարանին հաւաքածոն:

Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի Ս. Նահատակաց եկեղեցւոյ հոգարար ձեռնարկով կողմէ թանգարանին նուիրուած է 19րդ դարու հայկական բուրվառ մը կիրիկեան Հայաստանի եկեղեցիէ մը փրկուած:

Ֆիլիպ Սարրաֆ դարձեալ «Կիլիկիա» թանգարանին նուիրած է 19րդ դարու գործ եւ էփերկէն ու կեանքի յիշատակ փարչ ու կոնք մը, որոնք տնօրէնութեան յանձնուած են Տէր եւ Տիկին Անթուան եւ Անուշ Ստամպուլեաններու կողմէ:

Արժ. Տ. Անուշաւան Ա. Քհնյ. Արթինեան նշխարհի 3 կաղապարներ, 1 մասնատուփ եւ 1 սրբատուփ նուիրած է թանգարանին:

«Կիլիկիա» թանգարանի տնօրէնութիւնը շնորհակալութեամբ իր գոհունակութիւնը կը յայտնէ յիշեալ նուիրատուութեանց համար, մարտի 10-ը որ նման նուիրատուութիւններ խթան հանդիսանան այլոց, որպէսզի մեր ազգային եկեղեցական հարստութիւնները «Կիլիկիա» թանգարանին ճամբով բոլորին հարստութիւնը դառնան:

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՍՐՄԱՆ ԿԱՐԵԼԻՈՒԹԵԱՆ ԲԱՅԱՌՈՒՄ

Վրաստանի խորհրդարանի նախագահ Նինո Պուրճանաձէ լրագրողներուն յայտնած է, որ իր հայ պաշտօնակիցը՝ Արմէն խաչատրեան հեռաձայնային խօսակցութեան մը ընթացքին տեղեկացուցած է, որ Հայաստանի խորհրդարանը անցեալ Հինգշաբթի օրուան իր նիստին քննարկած է վրացեամերիկեան գինուորական համագործակցութեան հարցը, եւ հայ պատգամաւորներուն բացարձակ մեծամասնութիւնը յարգանքով կը մօտենայ Վրաստանի կողմէ իր անվրտանգութեան ապահովման ուղիներու ընտրութեան:

Պուրճանաձէ ըսած է, որ Հայաստանի խորհրդարանը փակ նիստի ընթացքին քննարկած է Հայաստանի ապահովութեան առնչուող հարցեր:

Ն. Պուրճանաձէի կարծիքով, այդպիսի հարցերու քննարկումը որեւէ երկրի խորհրդարանի իրաւունքն է. եւ Հայաստանի խորհրդարանի փակ նիստին առնչուած վրացի պատգամաւորներուն անհանգրստութիւնը գործի է որեւէ հիմքէ: Ան նաեւ լիովին բացատրած է Հայաստանի Ազգային Ժողովին կողմէ Վրաստանի դէմ որեւէ որոշում տալու կարելիութիւնը:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՄԱՐ

Քաղաքացիական հասարակութեան ստեղծման, ժողովրդավարական գործընթացներու զարգացման մէջ ոչ կառավարական կազմակերպութիւններու դերին եւ այդ կազմակերպութիւններուն ու իշխանութիւններուն փոխարարութիւններուն առնչուող հարցեր քննարկած է Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան արտաքին գործոց փոխ նախարար Մասիս Մայիլեան 4 Ապրիլին՝ ճանաչողական բնոյթ ունեցող կարճ այցելութեամբ Ստեփանակերտ գտնուող Կովկասի ոչ կառավարական կազմակերպութիւններու ֆորումի ներկայացուցիչներուն հետ:

Մ. Մայիլեան նշած է, որ Լեւոնային Ղարաբաղի իշխանութիւնները որքան կարելի է կ'աջակցին ոչ կառավարական կազմակերպութիւններու կայացման, կազմակերպութիւններ, որոնք Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան չճանչցուած ըլլալուն պատճառով գրկուած են միջազգային կառույցներու օժանդակութեան:

Պատուիրակութեան ղեկավար Լարիսա Սոթիկեա արտայայտուած է Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան ոչ կառավարական կազմակերպութիւնները աւելի աշխուժօրէն կովկասեան ֆորումին մէջ ընդգրկուելուն ի նպաստ, ինչ որ կարելիութիւն կ'ընձեռնէ շրջանի միւս կազմակերպութիւններուն հետ շփումներ հաստատելու:

365 ՕՐԵՐԸՆ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ

●Սոյն ձեռնարկին բարեգործ ազգայիններ կը ստանձնեն օրուան մը ճաշի ծախսը՝ 300 տոլար:

ԱՐՅԱԽԵԱՆ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹՌԻԶՔ ԱԿԱՆՆԵՐՈՒ ՎՐԱՅՈՎ...

1 Յունուար 2002: Հին Շէնի գիւղ: Հերկուած դաշտին եզրին Ռուսլան մեզ կը հիւրասիրէ հացով եւ խմիչքով: Կենացը կը խմէ սփիւռքահայութեան, որոնք իրենց դժուարին օրերուն օգնութիւն ցոյց տուին: Ապա գաւաթը կը բարձրացնէ դէպի հեռուոր լեռնապատ հորիզոնը, որուն ետին կը գտնուի Արարատը: «Բարձունքներ կան, որոնք դեռ պէտք է ազատագրենք», կը շեշտէ Ռուսլան:

Բերդաձորի մօտակայ Հին Շէն եւ Մեծ Շէն գիւղերը ազերիներու կողմէ գրաւուեցան 1991ի Մայիս 15ին: Ուղիղ մէկ տարի ետք, 1992ի Մայիս 17ին, Ռուսլան եւ իր գիւնակիցները ազատագրեցին գիւղերը:

Գիւղին մերձակայ գերեզմանատան մուտքին

24 Դեկտեմբեր 2001էն 14 Յունուար 2002, «Հորիզոն» լուսանկարիչ - թղթակից Հրայր - Բագր Խաչերեան իր 10րդ առաքելութիւնը իրականացուց դէպի Հայաստան եւ Արցախ: Ստորեւ ներկայացուած օրագրութեամբ, Հրայր - Բագր կը ներկայացնէ Արցախի առօրեան իր ուսմանակից ընդմէջէն: Հրայրի յառաջիկայ ծրագիրն է Արցախի անկախութեան 10ամեակին նուիրուած լուսանկարչական ալպոմ մը:

Բրտուլեան ու ծծի տակ կը սպաննեն Պարտի մէջ: 1993ին դիակը կը փոխանակուի, եւ մարտի իր ընկերները կը թողնեն գինը իր պաշտած գիւղին մէջ: Երբ մին վրայ ընկերներուն կողմէ արձանագրութիւն կայ: «Ես մատնուեցի, յուշաքար դարձայ, Բերդաձոր հասայ, անիծուէ՛ք դուք, ո՛վ նենգ խորդախներ»... այս տողերուն համար գիւղապետէն խնդրեցի բացատրութիւն: «Հայաստանի օրուան իշխանութիւնները մեզի թիրեցնեցին դիւղերը»:

Գիւղին մերձակայ գերեզմանատան մուտքին


վառեմ եւ աղօթքս կը կատարեմ:

2 Յունուար 2002: Նահատակ ազատամարտիկ զնդապետ Մերուժ Մոսիսեանի եղբոր՝ Արթուրի հետ կը մեկնիք Մարտունի: Ննգի, Պառուաթումբ, Կաղարծի եւ Խնուշիտակ գիւղերուն մէջ գործի կը լծեմ լուսանկարչական մեքենան՝ նկարահանելով տեղւոյն ընկերներն ու անոնց առօրեայ կեանքը: Մարտունիի մէջ կ'այցելենք մեզմէ հեռացած ընկերոջ՝ Մերուժի շիրիմը: Մահէն ետք ալ կողքին կը գտնուի մարտի իր ընկերները, որոնց հետ նահատակ-եց աւականայ աւակները:

3 Յունուար 2002: Արեւածագէն առաջ բանակային սպայ Վլատիկի հետ կ'ուղղուինք Մարտակերտ: Ծանապարհին կը հանդիպինք հազարապետ Վարդանին, որուն տարիներ առաջ լուսանկարած էի: Վարդանի առաջարկով յառաջանք դէպի ճակատային գիծ: Առաջին հանգրուանը Մատաղիսի գորակայան էր: Նորակոչ գինուորներ կը մարզուէին: Լուսանկարեցի: Զօրամէջը, հաւաքի ընթացքին գինուոր մը քարաշէն բեմահարթակին վրայ գինուորական ուղերձ կ'ընէ:

1993ին: Մարտունիին առաջին անգամ ինծի փորագրած անօթացուց ինքը՝ Մերուժը: Մերուժը, 1992ին, լուսանկարչական մէջ գինուորներու ռազմի գրու ձայնով կը հնչեն:

«Մեր Հայրենիք»-ը, Զորքի մէջ ինքնուրուի շիրմաքարին վրայ արձանագրուած է: «Ամենայն տեղ մահը մի է, մարդ մի անգամ պիտի մեռնի, բայց երանի, որ իւր ազգի ազատութեան կը զոհուի»:



Արցախի բանակի զինուոր մը կը գտնուի Աւնո Մկրտիչեանի դամբանը: Երբ մեքենան արագեւ եկաւ. Մարտաբար, կը կանգնի կողքին: 49ամեայ Աւնոն

ԱՐՅԱԽՅԻ ԳԵՂԱՆԿԱՐՁՈՒՀԻՒՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԻՍԸ՝ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

5 Ապրիլին Հայաստանի Նկարիչի Տան մէջ կատարուած է արցախցի երիտասարդ գեղանկարչուհի Գայիանէ Բարայեանի ստեղծագործութիւններու անհատական ցուցահանդէսին բացման արարողութիւնը: Ցուցադրուած են մօտ 70 ստեղծագործութիւններ: Ցուցահանդէսի բացման խօսք առնող գեղանկարիչներն ու արուեստագետները նշած են, որ հակառակ մասնագիտական կրթութեան պակասին, արցախցի գեղանկարչուհին արդէն ինքզինք հաստատած է եւ գոյնի, եւ կոտորուածքի ճաշակով ընտրութեան եւ ներկայացման մէջ:

Գայիանէ ծնած է Շուշի եւ 1989 թուականին ընտանիքով տեղափոխուած է Ստեփանակերտ, ուր կ'ապրի եւ կը ստեղծագործէ: Ան անհատական երկու ցուցահանդէսի բացում կատարած է Ստեփանակերտի մէջ, իսկ բազմաթիւ խմբային ցուցահանդէսներու մասնակցած է տարբեր երկիրներու մէջ:

ՀԱՒԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԻ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԶՕՐԱՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

Մայիսի կէսին Հաւաքական Անվտանգութեան Համաձայնագրի մասնակից պետութիւնները միասին զօրավարութիւններ պիտի կատարեն Մոսկուայի ռազմական ռազմամուկի գինուորական կեդրոններէ մէկուն մէջ: Այս մէկը տեղի պիտի ունենայ այդ պետութիւններու պաշտպանութեան նախարարներու խորհուրդի որոշումով: Զօրավարութիւններու զլխաւոր նպատակն է անարեկական խմբաձուլումներու ոչնչացման եւ կեդրոնական Ասիոյ մէջ գործողութիւններու սկսելու համար դաշնակից պետութիւններուն հետ կազմակերպչական աշխատանքներ կատարել:

Զօրավարութիւններուն պիտի մասնակցին Ռուսիոյ, Հայաստանի, Պիլիպոստանի, Ղազախստանի, Նիւրթեղիստանի եւ Տաճիկիստանի ստորարժանութիւններ, ընդամէնը հազար հոգի: Զօրավարութիւններու օգտագործուելիք սարքերն ու գործիքները պիտի տրամադրուին Ռուսիոյ կողմէ եւ անոնք պիտի ղեկավարուին ուսական 22րդ բանակի հրամանատար գոր. Ալեքսէյ Մերկուրեւի կողմէ:

Ըստ նախնական տեղեկատուութեան, զօրավարութիւններու երազակիչ հանգրուանով կը ծրագրուի, որ անոնց կայացման վարչական Ռուսիոյ պաշտպանութեան նախարար Մերգէյ Իվանովը եւ Հաւաքական Անվտանգութեան Համաձայնագրի մասնակից միւս երկիրներու անոր գործընկերները:

ամէնէն թէ՛ շոքար-թուժի շիրմաքարին վրայ արձանագրուած է: «Ամենայն տեղ մահը մի է, մարդ մի անգամ պիտի մեռնի, բայց երանի, որ իւր ազգի ազատութեան կը զոհուի»:

Ռուսլան. ետին Հին Շեն գիւղը:

«Պանք Օթոման»-ը եւ այլ գիւղափոխական երգեր: Աւելի կը մօտենանք սահմանագիծին: Կողքին կ'արժանանան գիւղին է, ազերիներու տիրապետութեան տակ: Կը հասնինք Մարտակերտի արեւելեան ծայրամասի Շուշիի գիւղը: Ռազմի դաշտին վրայ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆԸ

ՌՈՒՍԻԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԸ ՏՐԱՄԱԴՐԷ 60 ՏԵՂ

Ըստ Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարար Լեւոն Մկրտչեանի, միջպետական համաձայնութիւններու շրջագիծին մէջ, Ռուսիա 2002 - 2003 կրթական տարեշրջանի համար Հայաստանի տրամադրած է համալրարանի ուսուցման 60 տեղ, որմէ 10ը՝ մագիստրոսի եւ դոկտորայի աստիճաններուն համար: Ուրբանիս տրամադրած է 5 ուսանողական տեղ: Հայ ուսանողներուն համար մէկ տեղի պետական



ՀԱՅՐ-ԲԱԶԷ ԽԱՉԵՐԵԱՆ

«Հորիզոն» (Շար. 1)

ՀԱՄԻԿ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍՅԵՆ

HAMPIG SASSOUNIAN
CSP - L.A.C. B - 5 - 131 44750
60-TH ST. WEST LANCASTER, CA, 93536 — USA

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

ՀԱՅԵՐԸ ՄԱՍՆԱԿԻՑ՝ ՄԻԱՆՄԱՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲՆԱԳԱՒԱՌՆԵՐՈՒՆ

Պակլիտաու թագաւորին ժամանակ Միանմարի հայու թիւերը իր գործօն մասնակցութիւնը բերաւ Բրիտանիոյ ղէմ երկրի ինքնապաշտպանութեան պատերազմին, իսկ իշխան Սարգիս Մանուկեան միջնորդի եւ հաշտարարի դեր կատարեց: Նոյն ժամանակաշրջանին հայ նաւապետներ ու առեւտրականներ աշխուժացուցին իրենց գործունէութիւնը:

ԱՆԳԼԵՊՈՒՐՄԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԵ ԵՒ ՀԱՅԵՐԸ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՐԿՐԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ

Պոտաուփայ թագաւորին մահէն ետք, 1819ին, անոր յաջորդեց անդրանիկ գաւազը՝ Պակլիտաու: Ան թէեւ վարչական կարողութեան զուրկ եւ անկարող թագաւոր մըն էր, բայց անոր գործադարձ Մահա Պանտուլա մղեց զինքը, որ հետեւի իր հօր՝ Պոտաուփայի քաղաքանախնդութեան եւ Միանմարի ազդեցութիւնը տարածէ ղէպի Հնդկաստան:

Մահա Պանտուլայի եւ իր միւս զինուորականներուն քաջալերանքով ու խորհուրդով Պակլիտաու 1823ին ներխուժեց հիւսիս-արեւելեան Հնդկաստան: Սահմաններուն վրայ քանի մը օրուան կռիւներէ ետք Միանմարի բանակը նուաճեց Ասսամն ու Մանիփուրը եւ զանոնք Միանմարի ենթակայ ու հարկատու դարձուց: Բրիտանական Հնդկաստանի հետ Միանմարի սահմանը այսպէսով երկարեցաւ Արաքանէն, Պենակալի ծոցի ափերէն մինչեւ Հիմալայան լեռներ:

Բրիտանացիք Միանմարի սահմաններուն վրայէն կրկնուող յաճախակի յարձակումներուն վերջ տալու նպատակով եւ դուրս մղելու համար ներխուժողները, 5 Մարտ 1824ին քաջեցին Միանմարի ղէմ:

Բրիտանական բանակը յարձակման անցաւ սահմանին ամբողջ երկայնքին եւ զինական յստակ գերակշռութիւն վայելելով՝ ուժեղ հարուժու առեւ պուրմաններուն: Պակլիտաուի բանակները հարկադրաբար քաշուեցան Ասսամէն, Արաքանէն եւ Մանիփուրէն: Կռիւները հասան պուրմանական սահման: Սակայն բրիտանական բանակը առանց կանգ առնելու շարունակեց յառակապարտեց՝ սպառնալով Միանմարի պետութեան: Պարզ էր այլեւս, որ բրիտանացիք որոշած էին նուաճել ամբողջ երկիրը եւ իրենց գաղութին վերածել զայն: Ամարափուրայի արքունիքին մէջ ստեղծուեցաւ զգնաժամային վիճակ՝ ձեռք առնուեցան արտակարգ միջոցներ՝ զիմազարեւելու համար

պատերազմը:

Միանմարի հայու թիւերը իր կարգին գործի լծուեցաւ օգնութիւն տրամադրելու համար պուրման ժողովուրդին եւ բանակին: Քալաւուն (արտաքին գործոց նախարար) Մինաս, որ հեղինակութիւն էր Միանմարի քաղաքական կեանքին մէջ, դիւանագիտական մեծ ծառայութիւններ մատուցեց արքունիքին, իսկ ուրիշ հայեր զինուորական եւ պարենաւորման ծառայութիւններ մատուցեցին:


Յամաքի վրայ մղուող կատաղի կռիւներուն զուգահեռ, բրիտանական ծովուօդ իր կարգին գործի լծուեցաւ եւ Եանկոն (Ռանկոն) ցամաք էլլելով՝ առանց կռուի զբաւեց զայն: Բրիտանացիներուն նպատակն էր նուաճել ամբողջ Տելլիմը:

Եանկոն ցամաք էլլելով՝ բրիտանական զորքերը գործադար սըր Արչիպալտ Քէմփպըլի հրամանատարութեան տակ զբաւեցին ռազմագիտական դիրքերը եւ քաղաքը իրենց ամբողջական հակաշրջանին տակ առին: Հետաքրքրական է նշել, որ գործադար Քէմփպըլ հայ առեւտրական Յարուժեան Աւետիքեանի աղիւսէ, քարէ եւ երկաթէ կառուցուած հոյակերտ տունը իր կեդրոնատեղիին վերածեց:

Պատերազմի ընթացքին հայ համայնքին Միանմարի մատուցած ծառայութիւնը այնքան բացայայտ էր, որ բրիտանական ուժերը Եանկոն ցամաք էլլելէն ետք հայոց փայտաշէն Ս. Աստուածածին եկեղեցին հրդեհեցին՝ իբրեւ թշնամիի սեփականութիւն:

Մեծ առեւտրական իշխան Սարգիս Մանուկեան այդ օրերուն աշխատեցաւ հաշտարարի եւ միջնորդի դեր կատարել: ան Եանկոնի իր բնակարանը հրաւիրեց գործադար Քէմփպըլը եւ բանակցեցաւ անոր հետ:

Սակայն բրիտանական զորքերը շարունա-



Աշխարհի պուտոյայական մեծագոյն տաճարներէն՝ Անամտա (ձախին) եւ Թաթպիսիու (աջին), Միանմարի կեդրոնական Թանկի շրջանին մէջ:

ՀԱՅ ՆԱԿԱՊԵՏՆԵՐ ԵՒ ԱՌԵՒՐԱԿԱՆՆԵՐ

Միանմարի մէջ, ԺԸ. դարու վերջաւորութենէն սկսեալ եւ ԺԹ. դարուն սկիզբը, հայ առեւտրականներ ու նաւավարներ ծովային ու ցամաքային առեւտրին վրայ հակակշիռ հաստատած էին. մանաւանդ ծովային առեւտուրը մեծ մասամբ անոնց ձեռքն էր: Անոնց մէջ յիշենք Եանկոնաբնակ նաւապետներ Հայրապետ Մկրտում Շիրազեցի (մահացած՝ 1811ին), Յարուժեան Ղազար (մահացած՝ 1817ին) եւ Պետրոս Յովհաննէսեան (մահացած՝ 1830ին): Սուբիս Սահակեան (մահացած՝ 1850ին), գաւազը՝ Մարգար Դաւթեան եւ Արազամ Եսուգեան (մահացած՝ 1840ին) մայրաքաղաք Ամարափուրայի ամէնէն մեծ առեւտրականներն էին. իսկ նաւապետ Աւդալ Աւդալեան Մանտալայի մէջ կը բնակէր: Բայց ամէնէն աւելի նշանաւոր էր նաւապետ Յովսէփ Մանուկեան, Արեւելքի հռչակաւոր «Կապիտան Մանուկ»ը, որ կը նկատուէր Մայրա-

տասնեակ մը առաջաստանաւոր կառուցած է:

Հայ նաւավարներ հեռուոր շրջաններ ու կղզիներ կ'երթնեկէին, երբեմն անծանօթ ու ամայի ափեր եւ կղզիներ ցամաք կ'ելլէին եւ տարբեր ցեղերու հետ շփուել կ'ունենային: անպակաս էին արկածախնդրութիւններն ու ծովային արկածները:

ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄ ԵՄԿԱՆԻ Ս. ԱՍՏՈՒԾԱՅԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ

Անգլեւպուրման պատերազմէն ետք Միանմար քաղաքականօրէն անգլիական հովանաւորութեան ենթակայ դարձաւ. Պակլիտաու թագաւոր աշխատեցաւ աւելի բրիտանական իշխանութեան, քան կալկաթայի մէջ կեդրոնացած Արեւելեան Հնդկաստանի ընկերութեան հետ գործակցել:

Այս ժամանակ Եանկոնի հայերը ձեռնարկեցին իրենց քանդուած եկեղեցւոյ փոխարէն նոր եկեղեցւոյ կառուցման: Ս. Աստուածածին եկե-

ՆԱԿԱՊԵՏ ԶՈՎԱՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Մանուկեանները Եանկոնի հայ ամեհեհեհ նշանաւոր ու բարձր դիրք գրաւող ընտանիքներէն էին. անոնք իրենց հեղինակութիւնը պահեցին ԺԹ. դարու սկիզբէն մինչեւ դարավերջ:

Յովսէփ Մանուկեան, ծնած՝ 1776 - 1777ին, յանգուցն նկարագիրով ու նախածնունդով արտակարգ ընդունակութեամբ օժտուած, ծովային արկածախնդրութիւններու եւ առեւտրական ապարեգ նետուեցաւ: Երբ այլեւս գործը բաւական զարգացուցած էր, Եանկոնի մէջ ան նա մը շինել տուաւ եւ զայն «Եղիսարէք» կոչեց իր անդրանիկ դստեր անունով: «Եղիսարէք» նաւով ան շրջեցաւ Մայրագոյն Արեւելքի եւ հարաւարեւելեան Ասիոյ գրեթէ բոլոր նաւահանգիստներն ու կղզիները՝ թէ՛ նամբորդներ փոխադրելով եւ թէ՛ առեւտուր կատարելով: Ան շրջանի ժողովուրդներուն ծանօթ գաբձաւ «Կապիտան Մանուկ» անունով: Իր արկածախնդրութիւններով, ամէն տեղ ել ու մուտ ունենալով, ամէն անկիւն ճանչցած ըլլալով, ան արժանացաւ «ծովային գալլ» կոչումին:

Միանմարի կառավարութիւնը բարձր գնահատելով «Կապիտան Մանուկ»ի մատուցած ծառայութիւնները՝ անոր շնորհից մահապատճառ (իշխան) եւ ռազմ (ասպետ) բարձրագոյն տիտղոսները, որոնք հնդկական ռաճա տիտղոսին կը համապատասխանեն եւ միայն տեղացի բարձր դասակարգի ազնուականներուն սահմանուած էին, իսկ օտարի մը համար անկարելի էր արժանանալ այսպիսի բարձր շնորհի մը:

Յովսէփ Մանուկեան մահացաւ 30 Յունուար 1824ին, 47 տարեկանին, Կալկաթայի մէջ եւ հոն ալ, հայտն Ս. Նաւարէք եկեղեցւոյ բակին մէջ թաղուեցաւ:

«Կապիտան Մանուկ»ի երկրորդ գաւազը՝ Ստեփանոս Լոնտոնի արքունական բժշկական համալսարանէն շրջանաւարտ եղաւ եւ իբրեւ բժիշկ Միանմար վերադառնալով մեծ ծառայութիւններ մատուցեց ժողովուրդին՝ բոլորին սիրոյն ու յարգանքին արժանանալով:

Յովսէփ Մանուկեանի քրոջ գաւազն էր Թադեոս Աւետիսեան, որ անգլերէնէ թարգմանութիւններ կատարած է:



կեցին իրենց յառաջնադարը եւ 1825ին քաղցին ղէպի հիւսիս, մայրաքաղաք Ամարափուրայի ղէմ: Միանմար առիթը յարմար նկատելով՝ միացան անգլիացիներուն: Աւալի շրջակայ դաշտերուն մէջ արեւանհեղ գօտեմարտեր մղուեցան, իսկ վերջին եւ ամէնէն կատաղի ճակատամարտին պուրման հրամանատար գործադար Մահա Պանտուլա նահատակուեցաւ եւ անոր բանակը ցիր ու ցան եղաւ: Իսկ բրիտանական հրամանատարութեան տակ գործող հնդկական բանակը աւելի քան տասնհինգ հազար զոհ տուաւ:

Միանմարցիք ստիպուած հաշտութիւն ինդրեցին. 24 Փետրուար 1826ին Եանտապոյի մէջ դաշինք կնքուեցաւ, որուն համաձայն, Թենասսերիմ եւ Արաքան բրիտանական հովանաւորութեան տակ կ'անցնէին, Միանմար մէջ միլիոն սթրէլին պատերազմական տուրք պիտի վճարէր եւ պիտի հրաժարէր Ասսամի եւ Մանիփուրի նկատմամբ ամէն իրաւունքէ:

Պակլիտաու թագաւոր իր վրայ դրուած պատերազմական ծանր տուրք վճարելու համար ղրմեց իշխան Սարգիս Մանուկեանի եւ տասը միլիոն ռուփի փոխ առաւ անկէ՝ փոխարէնը մուրհակ մը տալով անոր (նշենք, որ հաշտութեան բանակցութիւնները վարող ղեկաւան ձոն Բրաուֆորտի վկայութեամբ, իշխան Սարգիս Մանուկեան չորս հարիւր հազար ռուփի փոխ տուած է թագաւորին):

«ԱԶԳԱԿ»Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
 «ԱԶԳԱԿ»ի հետ կապուելու համար հեռաձայնել հետևելով թիւերուն. -258526, 260115 եւ 241274:

ԻՇԽԱՆ ՍԱՐԳԻՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Միանմարի ամեհեհեհ ազդեցիկ ու հեղինակաւոր հայ ղեմբերէն է իշխան Սարգիս Մանուկեան: Ան ծնած էր 1784ին, Շիրազ եւ հետագային փոխադրուած է Միանմար: Միանմար հաստատուելով Սարգիս Մանուկեան նաւային առեւտուրի ձեռնարկեց եւ դարձաւ իրենից նաւավար: Երբ արդէն բաւական հարստութիւն կուտակած էր, ան կառուցել տուաւ «Տիգրան» եւ «Մլորա ՄաքՏոնալտ» (իր դստեր՝ Մարիկի անունով) նաւերը եւ անոնցմով ու այլ նաւերով առեւտրական մեծ գործառնութիւններ սկսաւ իրականացնել Մայրագոյն Արեւելքի, Հնդկաստանի եւ հարաւարեւելեան Ասիոյ շուկաներուն վրայ՝ այդպէսով իր կարեւոր նպաստը բերելով Միանմարի առեւտուրի զարգացման մէջ:

Արքունիքը, բարձր գնահատելով Սարգիս Մանուկեանի մատուցած ծառայութիւնները, անոր շնորհից ամբողջ Միանմարի ապրանքներու արտաձման մենաշրջանորդ: Ան իր կարեւոր նպաստը բերաւ նաեւ երոպական պետութիւններու հետ Միանմարի տնտեսական յարաբերութիւններուն զարգացման: Տարիներու ընթացքին ան անբաւ հարստութիւն կուտակեց եւ հաւանաբար երկրին ամեհեհեհ հարուստ անձը դարձաւ:

Պետական եւ քաղաքական շրջանակներու մէջ բարձր հեղինակութեան տիրացած Սարգիս Մանուկեան, շնորհիւ իր ունեցած կապերուն, կարեւոր պաշտօններ ստանձնեց արքունիքին մէջ՝ սերտ յարաբերութիւն հաստատելով արքայական ընտանիքին հետ: Արքունիքը բացառիկ պատիւով մը անոր բարձրագոյն ազնուականի՝ իշխանի տիտղոս շնորհեց:

Իշխան Սարգիս Եանկոնի մէջ, գետեգերբին, հոյակերտ ապարանք մը կառուցեց, բաղկացած՝ վեց բաժանմունքներէ. անկիւն կառուցուած էր պուրմական տիք կոչուող ամուր փայտէ: Բաժանմունքները

րէն մէկը կը ծառայէր իբրեւ իջեւան ամեն ազգի նաւապետներու համար, որոնք իշխանին հետ առեւտրական գործառնութիւններ ունեին:

Իշխան Սարգիս կարեւոր դերակատարութիւն ստանձնեց 1824 - 1825ի անգլեւպուրման պատերազմին՝ միջնորդի դեր կատարելով. եւ երբ 1826 Փետրուարին կողմերուն միջեւ հաշտութիւն գոյացաւ, Պակլիտաու թագաւոր անկէ տասը միլիոն ռուփի փոխ առաւ հատուցելու համար զայն Բրիտանիոյ՝ իբրեւ պատերազմական տուրք. փոխարէնը թագաւորը մուրհակ մը տուաւ իշխանին:

Իշխան Մանուկեան այնքան ազդեցիկ էր, որ իր միջնորդութեամբ բանտարկեալներ եւ մահուան դատապարտուածներ ազատ արձակուած են:

Կրթութեան սիրահար՝ ան տարիներ շարունակ իր ծախսով տասնհինգ աշակերտներ պահած է Կալկաթայի Մարդասիրական ձեմարանին մէջ:

Իշխան Սարգիսի Եանկոնի ապարանքը հաւաքատեղի էր ազգային, պետական, արքունական եւ առեւտրական ղեմբերու, ուր ամէն օր եօթ սեղանով կը բացուէր. յիշենք, օրինակ, որ 28 Օգոստոս 1847ին Եանկոնի քաղաքապետը իր չորս հարիւր հետեւորդներով հիւրասիրուած է իր տան մէջ:

Մահէն առաջ իշխան Սարգիս իր դստեր՝ Մարիկի Գեորգեանի յանձնեց թագաւորին տասը միլիոն ռուփիի մուրհակը՝ թելադրելով անոր չպահանջել զայն, բայց եթէ արքունիքը վճարէ, շնորհակալ ըլլայ: Սակայն արքունիքը չվերադարձուց իր պարտքը:

Իշխան Սարգիս Մանուկեան մահացաւ 15 Օգոստոս 1850ին, Եանկոնի մէջ: Մահուան առիթով ողբեր գրուեցան անոր մասին: Ան ունէր երեք գաւազ. Գրիգոր, Յովհաննէս եւ Մարիկ:


գոյն Արեւելքի ամէնէն հմուտ ծովակալը: Այս հայ նաւավարներն ու առեւտրականները ծանօթ էին Արեւելքի բոլոր նաւահանգիստներուն:

Հայ նաւապետներ իրենց նաւերով ուղեւորութիւններ կը կատարէին ղէպի Հնդկաստան, Սինկափուր, Հոլանտական Հնդկաստան (ներկայ Ինտոնեզիա), Չինաստան եւ այլ երկրներ: Նշենք, որ հայեր նաւահանգիստներ ալ կը զբաղէին. արհեստ մը, որ անծանօթ էր անոնց Հայաստանի մէջ. այնպէս որ, հայ նա-

ղեցին կառուցուեցաւ Տըլհաուզի եւ Ֆէյր փողոցներուն վրայ՝ երիցատունով միասին:

Պակլիտաու թագաւոր 1831էն սկսեալ իմացական ու հոգեկան անկախութեան մատուցեցաւ, որուն պատճառով ալ 1837ին գահընկէց հռչակուեցաւ եւ անոր յաջորդեց եղբայրը՝ իշխան Թարրուատտի Մին: Պակլիտաու մահացաւ 1846 Հոկտեմբերին:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Ր Ն



ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹԳՈՒԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Լիբանանի ֆուտբոլի ֆետերասիոնը շաբաթասկզբին իր գումարած ժողովին, վաերացնել է ետք 20րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները, առաջին հերթին հրապարակեց այն մարզիկներուն անունները, որոնք դեղին քարտ ստացան (տեսնել ստորև):

Առաջին հերթին եօթ մարզիկներ, իրենց երրորդ դեղին քարտը ստանալով մէկ մրցումով կախակայ-ւեցան ֆետերասիոնին կողմէ եւ պիտի բացակային շաբաթավերջին տեղի ունենալիք մրցումներէն: Անոնք են. Նապիլ Պապլաքի (Թատամոն Սուր), Ապտալա Հըմսի (Սաֆա), Ալի Ասատ (Նըթմէ), Շէտի Համատա (Ահլի Սայա), Ատի Աթթար, Եուսէֆ Ժաուհարի (Ահա) եւ Մըրուան Նախլէ (Հ. Մ. Մ.):

Այս մէկը թեթեւ պատիժներ ստացող մարզիկները: Ինչ կը վերաբերի քիչ մը աւելի ծանր պատիժներ ստացող մարզիկներուն, Հ. Մ. Մ. մարզիկ Սարգիս Մոտորեան երեք ամիսով կախակայուեցաւ ֆետերասիոնին կողմէ, մրցակից խումբին հայհոյած ըլլալուն համար:

20րդ հանգրուանի մրցումներէն ետք Սաֆա եւ ստացաւ մեծ հարուած մը, երբ անոր կարեւորագոյն մէկ մարզիկը՝ Թոմի Անտրիօ Ժաքոմելի մէկ ամիսով կախակայուեցաւ մրցակից կազմի մէկ մարզիկին հայհոյած ըլլալուն համար: Բացի այդ մէկէն, անոր ակումբը ստացաւ երեք միլիոն լիբանանեան ոսկիի տուգանք մը, որովհետեւ անոր համակիրները հայհոյած էին Ահաի դէմ տեղի ունեցած մրցումին:

Երկու այլ մարզիկներ՝ Եուսէֆ Քաթրոնի (Հ. Մ. Մ.) եւ Ուսամ Ապտալա (Ռասիկ) մէկական ամիսով կախակայուեցան: Առաջինը իրաւարարին հայհոյած ըլլալուն համար, իսկ երկրորդը՝ իր կողմ խաղարկուելուն պատճառով:

Վերջապէս, Հ. Մ. Մ. դէմ տեղի ունեցած մրցումին կարմիր քարտ ստացած Պըրթի մարզիկ Խալիլ Ալի երկու մրցումով կախակայուեցաւ:

Ստորեւ՝ 20րդ հանգրուանին դեղին քարտ ստացող մարզիկները, Ռամի Քֆուրի (Ախա Ալէյ), Մոհամէտ Խէյրէտտին (Շապապ Սահէյ), Հայտար Նաթմ, Նապիլ Պապլաքի, Գուրգէն Ենգիպարեան, Իմար Միրի, Քամոնոյ Քալոն (Թատամոն Սուր), Ուսամ Միրի, Հիշան Շէլէյ, Ապտալա Հըմսի (Սաֆա), Տատը Սայէտ, Պիլալ Համմուտ (Պըրթ), Յարուսթիւն Կիւլիզեան, Վարդան Զիբիւլեան (Հ. Մ. Մ.), Ալի Ասատ (Նըթմէ), Թանուս Պու Տրանսիս, Քլոտ Խարմա (Սալամ), Զուհէյր Մրատ (Անսար), Մատիօ Քոնաթի, Շէտի Համատա (Ահլի Սայա), Մոհամէտ Ասսա (Սաֆա), Ատի Աթթար, Եուսէֆ Ժաուհարի (Ահա), Հըսէյն Խալիլ, Մըրուան Նախլէ (Հ. Մ. Մ.), Տրայտէյ Օթիբի եւ Մոհամէտ Պատր (Ռասիկ):

Ստորեւ՝ 21րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը, որ կրած է կարգ մը փոփոխութիւններ:

ՇԱԲԱԹ, 13 ԱՊՐԻԼ	ԺԱՍ	ԴԱՇՏ
Հ. Մ. Մ. - Ահա	4:00ից	Պ. Համուտ
Անսար - Հ. Մ. Մ.	4:45ից	Պէյրուք
Շապապ Սահէյ - Թ. Սուր	4:45ից	Մ. Աւան
ԿԻՐԱԿԻ, 14 ԱՊՐԻԼ		
Սալամ - Սաֆա	4:00ից	Թրիփոլի
Ահլի Սայա - Պըրթ	4:00ից	Սաֆա
Ռասիկ - Սաֆա	4:00ից	Պ. Համուտ
Ախա Ալէյ - Նըթմէ	4:45ից	Պէյրուք

ԼԵՎԱՍՍ

ՇԱԲԱԹԱՎԵՐՋԻ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Շաբաթավերջին, Լ. եւ Ս. Յակոբեան Քոլէճի դաշտին վրայ տեղի կ'ունենան Հ. Մ. Մ. ԼԵՎԱՍԻ պասթեթպոլի մրցումները, որոնք կ'ընթանան բաւական հետաքրքրական ձեւով:

Ստորեւ՝ շաբաթավերջի մրցումներուն յայտագիրը:

ՇԱԲԱԹ, 13 ԱՊՐԻԼ	
Ս. Խանամիրեան - Գ. Զաքարյան (Միջակ աղջիկներ) Ժամը 12:00ից	
Մեսրոպեան - Յովակիմեան (Միջակ տղաք) Ժամը 1:00ից:	
Սոֆիա Յակոբեան - Մեսրոպեան (Մեծ աղջիկներ) Ժամը 2:00ից	
Մեսրոպեան - Եղիշէ Մանուկեան (Մեծ տղաք) Ժամը 3:00ից	
Ս. Քառասնից Մանկանց - Թորոսեան (Միջակ տղաք) Ժամը 4:00ից	
Կ. Բ. Վ. - Հայ Աւետ. Քոլէճ - Այննար (Մեծ տղաք) Ժամը 5:00ից	
Շամլեան Թաթիկեան - Եղիշէ Մանուկեան (Մեծ աղջիկներ) Ժամը 6:00ից	
Շամլեան Թաթիկեան - ձեմարան (Մեծ տղաք) Ժամը 7:00ից	

ԿԻՐԱԿԻ, 14 ԱՊՐԻԼ	
Դպրեվանք - Սրբուհի Ազնէս (Միջակ տղաք) Ժամը 3:00ից	
Նուպարեան - Խրիմեան - Դպրեվանք (Մեծ տղաք) Ժամը 4:00ից	
Գ. Զաքարյան - Նուպարեան - Խրիմեան (Միջակ աղջիկներ) Ժամը 5:00ից	
Ս. Հոփիսիմեանց - Ս. Խաչ (Միջակ տղաք) Ժամը 6:00ից	

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

11 ԽՈՒՄԲԵՐ ՑԱՐԴ ԱՊԱՐՈՎԱԾ ԵՆ ՓԼԵՅՕՖԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ԵՃ. ՊԻ. Էյ. Երէկուան մրցումներէն ետք 11ի բարձրացաւ փլէյօֆի մրցումներուն տոմար ապահովող խումբերուն թիւը: Անցեալ շաբաթավերջին Պոսթըն Սելիթիս հանդիսացած էր իննեւերորդ խումբը, որ կը հասնէր այդ հանգրուանին, 102-90 արդիւնքով յաղթական վերադառնալէ ետք Նիւ Ճըրզի Նէթցի դաշտէն:

Սելիթիսի եկան միանալու երկու խումբեր՝ Եուսէֆ Զէյք եւ Սիեթըլ Սուփըրսոնիթս, թէեւ առաջինը պարտութիւն կրեց Տալաս Մալըրիքսէն՝ 105-96 արդիւնքով: Սակայն նկատի ունենալով, որ Լուս Անճըրս Քլիփըրը 102-100 արդիւնքով պարտութիւն մը կրեց Սիեթըլ Սուփըրսոնիթսէն, փլէյօֆի տոմար ապահովող երկու խումբերը եղան ձէյք եւ Սուփըրսոնիթս:

Ձէյքի մարզիկ Քարլ Մալոն, որ անցեալ շաբաթավերջին վիրաւոր ըլլալով բացակայած էր Սաքրամենթո Քիւկիզի դէմ մրցումին, վերադառնալով՝ նշանակեց 22 կէտ: 17 եղանակի ընթացքին, Մալոն հինգերորդ անգամ ըլլալով կը բացակայէր դաշտերէն:

Սիեթըլի մէջ, Սոնիքս իր յաղթանակը կերտեց չորհրդէն Տէմընտ Մէյսընի, որ նշանակեց 36 կէտ: Անոր խմբակից Կէյրի Փէյթըն նշանակեց 22 կէտ եւ 13 էսիսք: Իսկ Քլիփըրզի մարզիկ Էյթըն Պրէյնը նշանակեց 22 կէտ եւ 9 ռիպուստ:

Կեդրոնական գօտիի (Արեւելեան շրջան) պարզուելի դիրքը գրաւող Տիթթոնիթ Փիսթընզ իր դաշտին վրայ 105-99 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Աթլանթա Հոքսը, շահեցաւ իր գօտիին տիրոջը: Այսպիսով, փլէյօֆի իր տոմարը արդէն իսկ ապահոված ֆիթնէսը կը դառնայ առաջին խումբը, որ կը հանդիսանայ իր գօտիին

ախոյեանը, 12 տարուան մէջ առաջին անգամ ըլլալով: Անիկա 1990ին հանդիսացած էր իր շրջանին ախոյեան:

Օրլանտոյի մէջ, Մէյթը 83-74 արդիւնքով պարտութեան մատնեց Հիուսթըն Ռոքէթսը: Այսպիսով, երկու կազմերուն միջև վերջին 15 հանդիպումներէն 14ը վերջ գտան Մէյթի թրէյսի Մաքլըյտի (Օրլանտո) նշանակեց 22 կէտ (14ը՝ չորրորդ բորքըրին), 10 ռիպուստ եւ 6 էսիսք, իսկ Սթիւ Տրենսիս (Հիուսթըն)՝ 29 կէտ:

Սան Անթոնիոյի մէջ, Սիլվըր 99-87 արդիւնքով պարտութեան մատնեց Միլուակը 24 կէտ, 8 ռիպուստ եւ 6 էսիսք:

Ստորեւ՝ ցարդ փլէյօֆի մրցումներուն իրենց տոմար ապահովող խումբերուն անունները:

- ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇՐՋԱՆ (Ատլանտեան գօտի)**
- 1.- Նիւ Ճըրզի Նէթց
 - 2.- Պոսթըն Սելիթիս (Կեդրոնական գօտի)
 - 3.- Տիթթոնիթ Փիսթընզ (ախոյեան)

- ԱՐԵՒՄՏԵԱՆ ՇՐՋԱՆ (Միջարեւմտեան գօտի)**
- 4.- Տալաս Մալըրիքս
 - 5.- Սան Անթոնիո Սիլվըր
 - 6.- Միլուակա Վուլվզ
 - 7.- Եուսէֆ Զէյք (Քաղաքական գօտի)
 - 8.- Սաքրամենթո Քիւկիզ
 - 9.- Լուս Անճըրս Լէյքըրզ
 - 10.- Փորթլենտ Թրէյլ Պլէյզըրզ
 - 11.- Սիեթըլ Սուփըրսոնիթս

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները: Օրլանտո Մէյթը - Հիուսթըն Ռոքէթց 83-74
Տիթթոնիթ Փիսթընզ - Աթլանթա Հոքս 105-99
Քլիփըրզ - Քալիֆորնիա Սթարզ 111-99
Երեւան Պուլզ - Պոսթըն Սելիթիս 105-100
Սան Անթոնիո Սիլվըր - Փորթլենտ Թրէյլ Պլէյզըրզ 99-87
Տալաս Մալըրիքս - Եուսէֆ Զէյք 105-96
Սիեթըլ Սուփըրսոնիթս - Լուս Անթոնիո Քլիփըրզ 102-100
Միլուակա Վուլվզ - Կոլորադո Սթարզ Ուորիըրզ 100-93

ՓԱՐԻՉԻ ՄԱՐԱԹՈՆԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԵՆ 29 ՀԱՉԱՐ ՎԱՉՈՂՆԵՐ

Անցեալ շաբաթավերջին Շանգիի մէջ փեղի ունեցաւ Փարիզի 26րդ մարաթոնը, որուն իրենց մասնակցութիւնը բերին շուրջ 29 հազար վազողներ:

Աղջկանց փափոցին փիրացաւ Պիլիպպի Մարիլին Ռեմարզը, որ յաջողեցաւ նոր արդիւնք մը արձանագրել, երբ ժամանման գիծ հասաւ 2 ժամ 23 վայրկյանով:



Մարիլին Ռեմարզ



Պեմուա Զվիբըրցեվաքի

Եւսէֆ Զէյքը 43 երկվայրկեան արդիւնքով: Տղոց փիրոզսին փիրացաւ Ֆրանսուա Գիլլիերը, որ արձանագրեց 2 ժամ 8 վայրկեան եւ 17 երկվայրկեան արդիւնք մը: Եթէ յապահէր, որ ան եօթ երկվայրկեան աւելի առջեւ հասնէր ժամանման գիծ իր կարգին յիսուս արդիւնք մը:

Հ. Մ. Մ. ՅԱՄԵՆԻ ՖՈՒԹԳՈՒԼԻ ԽՈՒՄԲԸ ԲԱՐՉՐԱՅԱՒ Բ. ԴԱՍԱԿԱՐԳ

Սուրիոյ ֆուտբոլի ախոյեանութեան Գ. դասակարգի մրցումներուն, Հ. Մ. Մ. Հայկախի խումբը այս եղանակին լաւ արդիւնքներ արձանագրեց եւ արժանացաւ Բ. դասակարգ բարձրանալու:

Հ. Մ. Մ. Հայկախի երբեմնի կազմերը ոչ միայն հայութեան, այլեւ Սուրիոյ եւ արաբական աշխարհին պատիւ բերած են երկար տարիներ շարունակ: Սուրիոյ բազմիցս ախոյեան մեր խումբը վերջին երկու տասնամեակներուն նահանջի մէջ էր եւ փաստօրէն փոխադրուած էր մինչեւ Գ. դասակարգ: Այսօր, սակայն, Հ. Մ. Մ. Հայկախի նոր սերունդին ջանքերով, յարատեւ աշխատանքով եւ Հ. Մ. Մ. կազմին հաւատքով՝ մեր խումբը վճռած է իր շարունակելու վերստին բարձրանալ Ա. դասակարգ:

Կը շնորհաւորենք մեր տղաքը, պատասխանատուները եւ բոլոր անոնք, որոնք իրենց աջակցութիւնը բերին այս ողջունելի իրագործումին, յանուն Հ. Մ. Մ. Ի եւ հայութեան արժանապատուութեան:

Ապրիլ, տղաք: Շարունակենք յաղթական երթը:

ՊԱՍԵԹՊՈՒ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ (ՖԱՅՆԸ ԶՈՐ)

ՌԻԱՏԻ ԵՒ ՍԱԺԷՍ ՀԱՍԱՆ ԱՒԱՐՏԱԿԱՆԻՆ

Լիբանանի պասթեթպոլի տղոց ախոյեանութեան կիսաւարտական հանգրուանի երէկուան չորրորդ հանդիպումներուն, Սաֆա եւ Ռիատի յաղթանակներ արձանագրեցին եւ ապահովեցին աւարտականին իրենց տոմար: Նախքան երէկուան մրցումները, անոնք երկուքն ալ 2 - 1 արդիւնքով յաւաքացած էին իրենց մրցակիցներուն դէմ:

Սաֆա 97 - 87 արդիւնքով պարտութեան մատնեց Անիպալ Ջահէն, մինչ Ռիատի՝ Շանվիլը, 111 - 105 արդիւնքով: Ռիատի իր յաղթանակը արձանագրեց յետ երկարածման, որովհետեւ մրցումը վերջ գտած էր 98 - 98 արդիւնքով, չորհրդէն Շանվիլի ստոյ՝ ամբողջից թոնի Մետիսընի բացառիկ խաղարկութեան, որ մրցումին վերջին երկվայրկեաններուն իր կատարեալ երեք կէտերով երկարածում պարտադրեց հիւրերկալ կազմին, սակայն երկարածման ընթացքին, Ռիատի տարաւ վերջնական յաղթանակը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՄԲԻՇՆԵՐԸ ՄԵԿՆԵՑԱՆ ՖԻՆԼԱՆՏԱ

Շաբաթակիցներին, Երեւանէն Ֆինլանտա մեկնեցաւ Հայաստանի յունահունական ոճի ըմբշամարտի հաւաքականը, Սենյակ քաղաքին մէջ իր մասնակցութիւնը բերելու համար Եւրոպայի ախոյեանութեան մրցաշարքին, որ տեղի պիտի ունենայ 11էն 13 Ապրիլին:

Հայաստանի հաւաքականի մարզիչ Լեւոն Զուլֆալեան իր կազմին միացուց Երեւանի մարզիկները, որոնք յոյս ունին լաւ արդիւնքներ արձանագրելու:

Ստորեւ՝ նկատի առնուած ըմբշները: Արտաշէս Մինասեան (55 կգ. Գիւմրի), Կարէն Մնացականեան (60 կգ. Երեւան), Վաղինակ Գալստեան (66 կգ. Երեւան), Սովակ Կարապետեան (74 կգ. Երեւան), Լեւոն Գեղամեան (84 կգ. Գիւմրի) եւ Ռուպէր Պետրոսեան (96 կգ. Էջմիածին):

ՉԵՄՓԻԸՆՉ ԼԻԿ

ԼԻԿԸՐՓՈՒԼ ԵՒ ՓԱՆԱԹԻՆԱՅՔՈՍ ԴՈՒՐՍ ՄՆԱՅԻՆ

«Զեմփիլըզ Լիկ»ի քառորդ աւարտականի դարձի ճակատումներուն, երէկ տեղի ունեցան բաւական տաք եւ հետաքրքրական մրցումներ, որոնց ընթացքին հիւրերկալ երկու խումբերն ալ՝ Պայէր Լեւերըզըն եւ Պարսեղոն յաղթանակներ արձանագրելով՝ ապահովեցին կիսաւարտական հանգրուանին իրենց տոմարը: Երթի մրցումներուն անոնք երկուքն ալ 1-0 արդիւնքով պարտութիւն կրած էին օտար դաշտերու վրայ, Պարսեղոն՝ Փանաթինայքոսէն, իսկ Լեւերըզըն՝ Լիվրփուլէն:

«Նուրմափ»ի մէջ տեղի ունեցած մրցումին, որուն ներկայ էր 90 հազար համակիր, յունական կազմը Տրդ վայրկեանին բացաւ մրցումին հաշիւը, շնորհիւ՝ Միխայիլս Բոնիսթանիթիոնի: Պարսա սակայն նշանակեց երեք կոլ, շնորհիւ՝ Լուիս Էնրիքէի (23րդ եւ 50րդ) եւ Խաւիէ Սալիուալի (63րդ): Սպանական կազմին բերդապահ Ռուպերթո Պոնանո 84րդ վայրկեանին ծանր կերպով վիրաւորուեցաւ, երբ բախեցաւ մրցակից կազմին մէկ մարզիկին: Ան փոխարինուեցաւ Խոսէ Մանուէլ Ռէյնայով:

Լիվրփուլի դէմ տեղի ունեցած մրցումին, Միքայէլ Պալաք (16րդ եւ 63րդ), Տիմիթար Պերպոլով (68րդ) եւ Լուչիօ (84րդ) նշանակեցին Պայէրի կոլերը, իսկ Ապէլ Ջաւիէ (42րդ) եւ Եւրի Լիթմանըն (79րդ)՝ անգլիական կազմին կոլերը:

Այսօր տեղի կ'ունենան քառորդ աւարտական հանգրուանի դարձի մնացեալ երկու ճակատումները, առաջինը՝ Ռէալ Մատրիտի եւ Պայէրի Միլնիթիի միջև, իսկ երկրորդը՝ Մանչեսթըր Եւնայթեդսի եւ Տեֆերթիլօ Քորուսի միջև:

ԵՐԵՎԱՆԻ ՄԵԶ

ՄԻ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ԵՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՓՈԽ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ԺՈՂՈՎ

Ռուսիոյ արտաքին գործոց փոխ նախարար Վիլյաչեւայա Տրուպինիքով, որ Երեւանի մէջ մասնակցեցաւ Հաւաքական Անվտանգութեան Պայմանագիրի մասնակից պետութիւններու արտաքին գործոց եւ պաշտպանութեան փոխ նախարարներու ժողովին, երէկ լրագրողներու հետ հանդիպումի մը ընթացքին յայտնեց, որ ԵԱՀԿի Մինսքի խմբակի ընդլայնումը՝ Հայաստանի եւ Ակրայէյճանի նախագահներու ներկայացուցիչներու ընդգրկումով, Մինսքի խմբակի նախագահներու առաջարկն էր, որ կը միտի ապահովել Լեռնային Ղարաբաղի տագնապի բանակցային գործընթացի անընդհատ երթը: «Երկու երկիրներու նախագահներու միջեւ անմիջական երկխօսութիւն մենք շատոնց չենք տեսած, այս իսկ պատճառով Մինսքի խմբակի նախագահները հանդէս եկան այս գաղափարով», ըսաւ Տրուպինիքով:

Լեռնային Ղարաբաղի տագնապի առնչութեամբ Ռուսիոյ դիրքորոշումին վերաբերող հարցումի մը պատասխանելով Տրուպինիքով յայտնեց, որ Ռուսիոյ դիրքորոշումը յստակօրէն արտայայտած է Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին: «Իսկ ինչ կը վերաբերի որեւէ ձեռն մշակման՝ փոխարին կամ փաթեթային, ապա ատիկա արդէն ոչ թէ Ռուսիոյ որոշելիքն է, այլ Հայաստանի եւ Ակրայէյճանի նախագահներու պատասխանատուութիւնն է», աւելցուց Տրուպինիքով:

Այն հարցումին, թէ աշխարհաքաղաքական նոր իրավիճակը՝ շրջանին մէջ Միացեալ Նահանգներու ներկայութիւնը փոփոխութիւններ պիտի մտցնէ՞ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման մէջ, Տրուպինիքով պատասխանեց, թէ ամերիկեան ռազմական մշտական ներկայութիւնը չի նախատեսուիր: «Ամերիկեան կողմի հաւաստագրումներով, ռազմական ներկայութիւնը պայմանաւորուած է այն խնդիրներով, զորն Միացեալ Նահանգներ եւ անհրաժեշտութեան դէմ դաշինքի անդամները կը լուծեն Աֆղանիստանի մէջ: Երբ աւարտի Աֆղանիստանի մէջ աշխուժ հանգրուանը, կը վերջանայ այսպիսի բնոյթի ներկայութիւնը, որ կայ այսօր: Այս չի նշանակեր, որ ամերիկացիները կամ շրջանի պետութիւնները այլեւս պիտի չհամագործակցին ռազմական - արեւտագիտական եւ այլ բնագաւառներու մէջ», ըսաւ Տրուպինիքով:

ՄԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ԺՈՂՈՎ

Հաւաքական Անվտանգութեան Պայմանագիրի (ԱՊ) մասնակից պետութիւններու արտաքին եւ պաշտպանութեան փոխնախարարներու ժողովը միջոցառումներ կ'անցնէ Երեւանի մէջ:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ԹԵՒ «ԿԸ ԲԱՇՈՒԻ»...

Շարունակուած 2րդ Էջէն

րուն վրայ: Իսրայէլեան աղբիւրներուն համաձայն ինը փնտրու սպաննուած է գաղթականներին մէջ: Աւելի ուշ, իսրայէլեան պատկերասփիռի կայանը հաղորդեց, որ երէկ յետմիջօրէին, 13 փնտրուներ այ սպաննուեցան Ժնիւնի մէջ:

Իսրայէլեան բանակը յայտնեց, որ անցնող տարւոյ օրուան ընթացքին սպաննուած է աւելի քան երկու հարիւր պաղեստինցիներ:

Միւս կողմէ, Շարուն ջնջեց ապահովութեան հարցերուն սեղմ դահլիճը, որուն մաս կը կապման արտաքին գործոց եւ պաշտպանութեան նախարարները: Շարուն անոնց հետ հանդիպումներ կ'ունենայ քննարկելու համար ապահովական հարցերը եւ այդ ուղղութեամբ որոշումները տալու համար: Շարուն ըսաւ, որ ապահովութեան հարցերը պիտի քննարկուին կառավարութեան ամբողջ կազմին կողմէ, ուր ներկայ կ'ըլլան կառավարական ընկերակցութիւնը կազմող կուսակցութիւններու ղեկավարները, կամ ներկայացուցիչները: Դէտեր ու մեկնաբաններ կ'ըսեն, որ վարչապետին այս որոշումը առիթ պիտի տայ ծայրայեղ աջակողմեաններուն յաւելեալ խօսք ու կշիռ ունենալու պաղեստինեան ինթիֆատային հանդէպ որդեգրուելիք միջոցառումներուն մասին: Սեղմ դահլիճին երկու նախարարներն ալ՝ Փերէս եւ Պեհմանին պըն Էլիպար Զախակողմեան Աշխատատեղական կուսակցութեանն են: Շարուն լաճախ տարակարծութիւններ ունեցած է անոնց հետ պաղեստինեան տագնապին գծով:

● ՄԱԿԻ Ապահովութեան խորհուրդը դոմփակ նիստի մը ընթացքին խիստ հանդիպում մը ունեցաւ Իսրայէլի դեսպանին հետ, որմէ բացատրութիւն պահանջեց պաղեստինեան շրջանները գրաւուած պահելու պատճառին մասին:

● ՌՈՒՍԻԱ կոչ ուղղեց Իսրայէլի անմիջապէս հետաձգելու իր ուժերը պաղեստինեան շրջաններէն՝ մեղմացնելու համար Միջին Արեւելքի մէջ տիրող յարուածութիւնը:

● ԲՐԻՏԱՆԻՅԱ Վարչապետ Թոնի Դլէր պատրաստակամութիւն իսլամարարեց բրիտանացի դէտեր ուղարկելու հակելու համար պաղեստինցիներուն եւ Իսրայէլի միջեւ հաստատուելիք որեւէ պինդուիլի:

(ՌՈՅԹԸՐԸ)

րու ժողովը տեղի ունեցաւ երէկ, որուն մասնակցեցաւ նաեւ Հաւաքական Անվտանգութեան խորհուրդի (ԱՄ) ընդհանուր քարտուղար Վալերի Նիքոլայենքո:

Լրագրողներու հետ հանդիպումի մը ընթացքին Նիքոլայենքո ըսաւ, որ հանդիպումի հիմնական քննարկումները կը վերաբերէին Մայիս 14ին Մոսկուայի մէջ երկիրներու նախագահներու մակարդակով նախատեսուող ԱՄԻ յոբելեանական նստաշրջանի նախապատրաստութեան: «Մենք կը ցանկանք, որ այդ յոբելեանականը ըլլայ ոչ միայն հանդիսութիւն, այլեւ կարեւոր հարցերու լուծման առիթ, որ նոր մակարդակի կը բարձրացնէ ռազմաքաղաքական համագործակցութիւնը եւ համարկումը», ըսաւ Նիքոլայենքո:

Հայ-ռուսական հարաւային կովկասեան միացեալ ռազմական Կօրախումբի մը ստեղծման աշխատանքներուն մասին Վալերի Նիքոլայենքո նշեց, որ այդ ուղղութեամբ աշխատանքները շատ աշխուժ ձեւով կը շարունակուին, եւ համաձայնագիր մը գոյացած է ուժերու համատեղ օգտագործման մասին: «Ներկայիս կը քննարկուի երեք՝ արեւելաերոպական (ռուս-պիւրտուսական հիմքի վրայ), հարաւային կովկասեան (հայ-ռուսական հիմքի վրայ) եւ կեդրոնական ասիական ուղղութիւններու միջեւ սերտ համակարգումին առնչուող հարցեր», ըսաւ Նիքոլայենքո:

ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆԵՆ ՈՒՂԵՐԾ՝ ՎԼԱՏԻՄԻՐ ՓՈՒԹԻՆԻՆ

Հայաստանի եւ Ռուսիոյ միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման տասնամեակին առիթով Հայաստանի նախագահ Ռուպէրթ Քոչարեան երէկ ուղերձ մը յղած է Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինին:

Ուղերձին մէջ նախագահ Քոչարեան նշած է, որ երկու ժողովուրդներուն միջեւ եղբայրական յարաբերութիւններու աւանդոյթները եւ ազգային շահերու նմանութիւնը կը կազմեն Հայ-ռուսական ռազմավարական գործակցութեան հիմքը: Նախագահ Քոչարեան անդրադառնալով երկու երկիրներու կապերը ամբողջով քաղաքական եւ տնտեսական հիմնական փաստաթուղթերուն, նշած է. «Հայ-ռուսական յարաբերութիւններու ժամանակակից փուլը կը բնութագրուի փոխշահաւէտ համագործակցութեան խորացմամբ: Մեր կարծիքով, տնտեսութիւնը պէտք է դառնայ մեր յարաբերութիւններու հիմնական կէտը»:

Նախագահ Քոչարեան նաեւ անդրադարձած է միջազգային քաղաքականութեան եւ ԱՊՀ-ի ու Հաւաքական Անվտանգութեան Պայմանագիրի ծիրէն ներս երկու երկիրներու արդիւնաւէտ գործակցութեան:

Խօսելով Ռուսիոյ շրջանային դերին մասին, նախագահ Քոչարեան յայտնած է, թէ Հայաստան կը գնահատէ Ռուսիոյ միջնորդական դերը Լեռնային Ղարաբաղի տագնապի խաղաղ լուծման գործընթացին մէջ: «Մենք շրջանին մէջ հակամարտութիւններու խաղաղ լուծման սկզբունքին կողմնակից ենք: Հայաստանի արտաքին քաղաքականութիւնը ուղղուած է կովկասի պետութիւններուն միջեւ կառուցողական համագործակցութեան ապահովման, ինչ որ բարենպաստ մթնոլորտ կը ստեղծէ շրջանին մէջ առկայ խնդիրներու լուծման համար», ըսած է նախագահ Քոչարեան, Փութինին ուղղած ուղերձին մէջ:

Շնորհաւերելով նախագահ Փութինը՝ Հայաստանի եւ Ռուսիոյ միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման առիթով, նախագահ Քոչարեան համոզուած յայտնած է, թէ երկու երկիրներու միջեւ յարաբերութիւնները պիտի շարունակեն զարգանալ, ի ինչիւր հայ եւ ռուս ժողովուրդներու բարօրութեան:

ՅՐԱՆՍԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐԱՊԱՅԵԱՐ

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԱՐԶԱԿՈՂԱԿԱՆԻ Կ'ԱՆՑՆԻՆ ԺԱՔ ՇԻՐԱՔԻ ԴԷՄ

Ֆրանսայի Ընկերվարական կուսակցութիւնը երէկ ընդհանուր յարձակողականի մը ձեռնարկեց ժաք Շիրաքի ընտրարշաւին ընթացքին նախագահին կողմէ առաջարկուած տնտեսական քաղաքականութեան դէմ, յայտարարելով, որ պահպանողական նախագահը «վտանգաւոր է Եւրոպայի համար»:

Ելեմուտքի նախկին նախարար Տոմինիք Սթրոս-Քան, որ ներկայիս վարչապետ Լիոնէլ ժոսփէնի մէջ բանբերն է, ամբաստանեց Շիրաքը, ըսելով, որ ան Ֆրանսայի գործակիցները կ'անտեսէ, երբ շահատուրբերու մեծ կրճատումներ կը խոստանայ՝ ի հեճուկս եւրոպական պիւտնճեկական բացի նուազումի թիրախներուն:

Ամբողջ երկու ժամ տեւողութեամբ, Սթրոս - Քան մամուլի ասուլիսի մը ընթացքին Շիրաքի ծրագրերին մէջ «ծակեր» բացաւ եւ պաշտպանեց ժոսփէնի պաշտօնավարութեան օրերուն ձախկողմեաններու տնտեսական նուաճումները (անցնող 5 տարիներուն): Նորագոյն հարցախոյզները ցոյց տուած են, թէ ընտրութիւններէն հազիւ 2 չպարթ առաջ, ժոսփէն Շիրաքի բաղադատմամբ իր փոքր համեմատութեամբ առաջնահերթութիւնը կորսնցնելու սկսած է:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՊԱՂԵՍՏԻՆԵՒԻ ՍՐԱՅԷԼԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ՝ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒ ԸՆԴՄԵՋԷՆ...

Յաճախ լուսանկարները շատ աւելի լոյս կը սփռեն իրականութիւններու վրայ, քան յօդուածներ կամ լրատուութիւններ: Յատկապէս պատերազմական իրավիճակներու մէջ, ինչ որ է այսօր պարագան պաղեստինեալայէլեան տագնապին: Պաղեստինցի ժողովուրդը ոգի ի բռին կը պայքարի իր գոյութեան համար, իր հայրենի հողին պաշտպանութեան եւ վերջնական ապատագրութեան համար: Ստորեւ տրուած նկարները որքան ալ Իսրայէլի փնտրական ուժը կը ներկայացնեն, պաղեստինցի քաջարի ժողովուրդը որոշած է ի գին ամէն ինչի պայքարիլ եւ տանիլ վերջնական յաղթանակը: Եւ այն ժողովուրդը, որ մեռնիլ գիտէ, կ'ապրի յաւիտ...



Իսրայէլացի զինուոր մը «յաղթական» կը ցկատէ Թուլքարմէն մեկնումը, զոր «ձեւացուց» Շարուն՝ ճորճ Պուշի...



Նապոլուսի մէջ իսրայէլեան հրետանի մը դիրք առած է մզկիթի մը առջեւ: Կարելի՞ է այս մէկը գրգռութեան այլ բան ցկատել...



Հակառակ տիրող դժուար պայմաններուն ու իսրայէլեան սաստիկ ուժակոծումից՝ պաղեստինցիք կը շարունակեն մեծաթիւ շարքերով հողին յանձնել իրենց ցանառակները: